ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-2

ք. Երևան «27» 03 2025 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Ա. Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ապահովագրման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **10 039 800** (տասը միլիոն երեսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միանշանակորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արամի 3,5
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008157113
ՀՎՀՀ 02551341
Հեռ.՝ /060/ 540000
Էլ. Փոստ: info@silinsurance.am

Ա. Մելքոնյան
(ստորագրություն)
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«27» 03 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

դրավերով նախատեսված ուփաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
2	Ապահովագրական ծախսեր «ԿԱՍԿՈ» CPV -66511180/501	Ավտոտրանսպորտային միջոցների Կասկո ապահովագրություն ° ՀՀ ՆԳՆ ՏՎ հաշվեկշռում հաշվառված 3 միավոր տրանսպոտային միջոցների ԿԱՍԿՈ ապահովագրություն Հատուցման պետք է ենթակա լինի՝ ՏՄ-ին, այդ թվում դիմապակու, հետնապակու, կողային ապակիներին և ընթացային մասերին պատճառված ֆիզիկական վնասը և կամ դրա կորուստը ՃՏՊ ճանապարհով ՏՄ-ի շարժման ընթացքում կամ կանգառի վիճակում դրա մասնակցությամբ առաջացած դեպքը Բնական/տարերային աղետներ-/բացառությամբ երկրաշարժ և սողանք/ բնության ազդեցությունը ՏՄ-ի վրա/ օդային զանգվածի տեղաշարժումներ, փոթորիկ մրրիկ,կայծակի,հարված,ջրհեղեղ, կարկուտ,հրաբխի ժայթում, լեռնային փլուզում, գետնի նստվածք,սելավ,ձնահյուս Կենդանիների գործողություններ: Թռչող սարքավորումների կամ նրանց բեկորների և/կամ մասերի կամ այլ առարկաների և իրերի շինարարական բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելը, կոնստրուկցիաների հետ բախումը ՏՄ-ի հետ կամ դրանց վայր ընկնելը ՏՄ-ի վրա , ինչպես նաև ծառերի, քարերի, բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելը ՏՄ-ի վրա. ՏՄ-ն ջրի մեջ ընկնելը	դրամ	2 088 000	1	ք. Երևան Ծ. Իսակովի 7	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 1 տարի ժամկետով

		չվերահսկվող այրում և/կամ մեծ հարվածային ուժով էներգիայի կտրուկ արագության միանվագ առաջացումը Երրորդ անձանց կողմից թույլ տրված անօրինական գործողություններ կամ նման գործողությունների փորձ, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրումով, ներառյալ դրանց հետևանքով ՏՄ-ի հրկիզում,պայթեցում, վնաս և/կամ կորուստը Երրորդ անձանց կողմից անզգուշությամբ թույլ տրված անօրինական գործողությունները ՏՄ-ի կամ նրա մասերի գողություն կամ դրա փորձը ՏՄ-Ի կամ նրա մասերի կողոպուտ կամ դրա փորձը • ՏՄ հայելիների, անվադողերի, անվահեծերի, անիվների դեկորատիվ ծածկերի, հաշվառման համարանիշների, չեզոքացուցիչների, լապտերների, ֆիրմային ցուցանիշների, արտաքին այլ տեղադրված մասերի և սարքավորումների, այդ թվում՝ սպոյլերների, մոլդինգների ֆիզիկական վնասը և հափշտակությունը - Եթե վթարը տեղի է ունեցել ՏՄ-ի հանդիպակաց ուղեմաս մուտք գործելու կամ ճանապարհի երթևեկելի մասի ձախ կողմից դուրս գալու արդյունքում կամ ընթացքում/ այդ թվում՝ ՏՄ-ի ընթացքի կայունությունն ու կառավարելիությունը կորցնելու կամ վարորդի կողմից երթևեկելի մասում առկա խոչնդոտը կամ վտանգի աղբյուրը շրջանցելու հետևանքով - Եթե խախտվել են ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 28-ի համար 955-Ն որոշման հավելված 1-ով սահմանված հետևյալ ՃՏՊ-ի կանոնները՝ ՏՄ-ի վարում լուսացույցի արգելող ազդանշանի տակ, արգելված վայրում ՏՄ-ի հետադարձ, շրջադարձ կամ հեռընթաց կատարում, ՏՄ-ով հոծ գծանշման հատում, ՏՄ-ի շահագործում տվյալ ճանապարհահատվածի համար սահմանված /թույլատրված/ արագությունից 30 կմ/ժ -ով ավելի արագությամ					

		Չհատուցվող գումար՝ Ֆիզիկական վնասի և/կամ կորստի դեպքում յուրաքանչյուր ավտոմեքենայի և դեպքի համար չի նախատեսվում: Հափշտակության դեպքում՝ վնասի օրվա դրությամբ առավելագույնը 1 Տ/Մ-ի ապահովագրական գումարի 10%, իսկ հակառևանգիչ սարքավորման առկայության դեպքում՝ առավելագույնը 1 Տ/Մ-ի ապահովագրական գումարի 5%: Եթե տրասնպորտային միջոցները գտնվում են երաշխիքային սպասարկման մեջ, ուստի դրանց վերանորոգումը մինչև երաշխիքային սպասարկման ավարտը պետք է կատարվի երաշխիքային սպասարկում տրամադրող <<ԱՎԱՆԳԱՐԴ Մոթորս>> ՓԲԸ-ի կողմից մատնանշված վերանորոգման կետում՝ բացառելու համար երաշխիքային սպասարկումից դուրս գալը, իսկ պահեստամասերը պետք է տեղադրվեն բացառապես ավտոարտադրողի կողմից ներկրված գրոծարանային արտադրության՝ չկիրառելով մաշվածության գործակիցներ:Երաշխիքային սպասարկումից դուրս եկած ավտոմեքենաները կարող են վերանորոգվել նաև ապահովագրողների բյուրոյի կողմից նվազագույն պահանջներին բավարարող ընկերություններում, սակայն պահեստամասերը նույնպես պետք է տեղադրվեն բացառապես ավտոարտադրողի կողմից ներկրված գործարանային արտադրության:Ընդ որում, թե երաշխիքային սպասարկման մեջ գտնվող, և թե Երաշխիքային սպասարկումից դուրս եկած տրանսպորտային միջոցներին հասցված վնասի գնահատման հաշվարկի ժամանակ չպետք է կիրառվեն մաշվածության գործակիցներ՝ անկած տրանսպորտային միջոցի տարեթվից,կատարված վազքից կամ այլ գործոններից: **Հավելված 1.1**					

3	Ապահովագրական ծախսեր «ԿԱՍԿՈ» CPV -66511180/503	Ավտոտրանսպորտային միջոցների Կասկո ապահովագրություն ° ՀՀ ՆԳՆ ՏՎ հաշվեկշռում հաշվառված 12 միավոր տրանսպոտային միջոցների ԿԱՍԿՈ ապահովագրություն Հատուցման պետք է ենթակա լինի՝ ՏՄ-ին, այդ թվում դիմապակու, հետնապակու, կողային ապակիներին և ընթացային մասերին պատճառված ֆիզիկական վնասը և կամ դրա կորուստը ՃՏՊ ճանապարհով ՏՄ-ի շարժման ընթացքում կամ կանգառի վիճակում դրա մասնակցությամբ առաջացած դեպքը Բնական/տարերային աղետներ-/բացառությամբ երկրաշարժ և սողանք/ բնության ազդեցությունը ՏՄ-ի վրա/ օդային զանգվածի տեղաշարժումներ, փոթորիկ մրրիկ,կայծակի,հարված,ջրհեղեղ, կարկուտ,հրաբխի ժայթում, լեռնային փլուզում, գետնի նստվածք,սելավ,ձնահյուս Կենդանիների գործողություններ: Թռչող սարքավորումների կամ նրանց բեկորների և/կամ մասերի կամ այլ առարկաների և իրերի շինարարական բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելը, կոնստրուկցիաների հետ բախումը ՏՄ-ի հետ կամ դրանց վայր ընկնելը ՏՄ-ի վրա , ինչպես նաև ծառերի, քարերի, բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելը ՏՄ-ի վրա, ՏՄ-ն ջրի մեջ ընկնելը չվերահսկվող այրում և/կամ մեծ հարվածային ուժով էներգիայի կտրուկ արագության միանվագ առաջացումը Երրորդ անձանց կողմից թույլ տրված անօրինական գործողություններ կամ նման գործողությունների փորձ, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրումով, ներառյալ դրանց հետևանքով ՏՄ-ի հրկիզում,պայթեցում, վնաս և/կամ կորուստը	դրամ	7 951 800	1	ք. Երևան Ծ. Իսակովի 7	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 1 տարի ժամկետով

		Երրորդ անձանց կողմից անզգուշությամբ թույլ տրված անօրինական գործողությունները ՏՄ-ի կամ նրա մասերի գողություն կամ դրա փորձը ՏՄ-Ի կամ նրա մասերի կողոպուտ կամ դրա փորձը • ՏՄ հայելիների, անվադողերի, անվահեծերի, անիվների դեկորատիվ ծածկերի, հաշվառման համարանիշների, չեզոքացուցիչների, լապտերների, ֆիրմային ցուցանիշների, արտաքին այլ տեղադրված մասերի և սարքավորումների, այդ թվում՝ սպոյլերների, մոլդինգների ֆիզիկական վնասը և հափշտակությունը - Եթե վթարը տեղի է ունեցել ՏՄ-ի հանդիպակաց ուղեմաս մուտք գործելու կամ ճանապարհի երթևեկելի մասի ձախ կողմից դուրս գալու արդյունքում կամ ընթացքում/ այդ թվում՝ ՏՄ-ի ընթացքի կայունությունն ու կառավարելիությունը կորցնելու կամ վարորդի կողմից երթևեկելի մասում առկա խոչնդոտը կամ վտանգի աղբյուրը շրջանցելու հետևանքով - Եթե խախտվել են ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 28-ի համար 995-Ն որոշման հավելված 1-ով սահմանված հետևյալ ՃՏՊ-ի կանոնները՝ ՏՄ-ի վարում լուսացույցի արգելող ազդանշանի տակ, արգելված վայրում ՏՄ-ի հետադարձ, շրջադարձ կամ հետընթաց կատարում, ՏՄ-ով հոծ գծանշման հատում, ՏՄ-ի շահագործում տվյալ ճանապարհահատվածի համար սահմանված /թույլատրված/ արագությունից 30 կմ/ժ -ով ավելի արագությամ Չհատուցվող գումար՝ Ֆիզիկական վնասի և/կամ կորստի դեպքում յուրաքանչյուր ավտոմեքենայի և դեպքի համար չի նախատեսվում: Հափշտակության դեպքում՝ վնասի օրվա դրությամբ առավելագույնը 1 Տ/Մ-ի ապահովագրական գումարի 10%, իսկ հակաառևանգիչ սարքավորման առկայության դեպքում՝ առավելագույնը 1 Տ/Մ-ի ապահովագրական գումարի 5%:					

		Եթե տրանսպորտային միջոցները գտնվում են երաշխիքային սպասարկման մեջ, ուստի դրանց վերանորոգումը մինչև երաշխիքային սպասարկման ավարտը պետք է կատարվի երաշխիքային սպասարկում տրամադրող <<Մեգնա>> ՍՊԸ-ի կողմից մատնանշված վերանորոգման կետում՝ բացառելու համար երաշխիքային սպասարկումից դուրս գալը, իսկ պահեստամասերը պետք է տեղադրվեն բացառապես ավտոարտադրողի կողմից ներկրված գործարանային արտադրության՝ չկիրառելով մաշվածության գործակիցներ:Երաշխիքային սպասարկումից դուրս եկած ավտոմեքենաները կարող են վերանորոգվել նաև ապահովագրողների բյուրոյի կողմից նվազագույն պահանջներին բավարարող ընկերություններում, սակայն պահեստամասերը նույնպես պետք է տեղադրվեն բացառապես ավտոարտադրողի կողմից ներկրված գործարանային արտադրության:Ընդ որում, թե երաշխիքային սպասարկման մեջ գտնվող, և թե Երաշխիքային սպասարկումից դուրս եկած տրանսպորտային միջոցներին հասցված վնասի գնահատման հաշվարկի ժամանակ չպետք է կիրառվեն մաշվածության գործակիցներ՝ անկած տրանսպորտային միջոցի տարեթվից,կատարված վազքից կամ այլ գործոններից: **Հավելված 1.2**					

Հավելված 1.1

	Մեքենայի մակիշ	Նույնականացման համար	Հաշվառման համարանիշ	Մեքենայի շուկայական արժեք	ԿԱՍԿՈ Վճար
1	Մերսեդես Բենզ Սպրինտեր 311 CDI			24,000,000.00	696,000.00
2	Մերսեդես Բենզ Սպրինտեր 311 CDI			24,000,000.00	696,000.00
3	Մերսեդես Բենզ Սպրինտեր 311 CDI			24,000,000.00	696,000.00
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՆ՝ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ					2,088,000.00

Հավելված 1.2

	Մեքենայի մակիշ	Նույնականացման համար	Հաշվառման համարանիշ	Մեքենայի շուկայական արժեք	ԿԱՍԿՈ Վճար
1	Renault Master L3H2			22850000	662,650.00
2	Renault Master L3H3			22850000	662,650.00
3	Renault Master L3H4			22850000	662,650.00
4	Renault Master L3H5			22850000	662,650.00
5	Renault Master L3H6			22850000	662,650.00
6	Renault Master L3H7			22850000	662,650.00
7	Renault Master L3H8			22850000	662,650.00
8	Renault Master L3H9			22850000	662,650.00
9	Renault Master L3H10			22850000	662,650.00
10	Renault Master L3H11			22850000	662,650.00
11	Renault Master L3H12			22850000	662,650.00
12	Renault Master L3H13			22850000	662,650.00
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՆ՝ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ					7,951,800.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀԿՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արամի 3,5
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008157113
ՀԿՀՀ 02551341
Հեռ. 0060 540000
Էլ. Փոստ: info@silinsurance.am

Ա. Մերոնյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1

« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն